Գուցէ այս տեսակի դատավարական երևոյթի տակ՝ կը նիւթուէր և դաւեր՝ որ Աշիրաթ սպետին միայն յայտնի էր (*)։

ՎՐԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Մութ-խաւար գիշեր է՝ գեղեցիկ հովտին մէջ միայն լսելի են քամիի սուլոցը, ձիու խրխնջոցը, ջրի կարկաչիւնը։ Վրանները կեղրոնը բէգական թանկագին վրանի տակ հաւաքուած են Էլեաթի էլ-աղասիները հրացանը ձեռքին պատրաստ՝ սուրը կողքէն կախ. անոնք ծաղապատիկ նստած են իրար մօտիկ լուռ ու մունջ, ոչ մէկը չի համարձակուիր խզելու խորհրդաւոր լռութիւնը։ Ամեն մէկի ձին վրանի առջև կապուած լինելով, անոր մուտքը փակուած է գրեթէ. ձէթի աղօտ ճրագ մը պլպլալով կը լուսաւորէ վրանաբնակներուն՝ հաղիւ նշմարելի դարձնելով ամեն մէկի դէմքը. ճրագի մանաւոր ծառան մօտիկ կանգնած միշտ վեր կուտայ պատրոյգը, որ լոյսը կարողանայ շարունակել պլպլալու ու երբեմն երբեմն ներս փչող քամիէն չը հանգչելու։

Մի ուրիշ ծառայ պղնձէ ջրի մեծ թասը ձեռքն բռնած, անոր մէջ զուլալ սառ ջուր կ'ածէ ու բերելով ճրագի լոյսին ցոյց կուտայ, տեսնելու թէ կայած ամանը իր յատակութեամբ

Դատաստանական պայմանները որոշ գիծ չունին Քիւրդերու մէջ. օրինակ Պէտերխան պէյի օրով տղամարդկանց վիզը կը չափէին որոշ չափի պատրաստուած թելով մը, եթէ վզի հաստութիւնը հասնէր՝ նա տուրֆ վնաբելու կարող կը նկատուէր։

Մոկսի մէջ Ապտալ բէգը դուրսէն տեղեկութիւններ կը հաւաքէր դատավարութեանց վերաբերեալ, և ջրի նստած իր հետևորդներով որոշեալ օրը կուգար Օսմ. կառավարական պաշտօնատան առաջ, քիւրդ հասարակութեան ներկայութեան բարձրաձայն միայն կը յայտարարէր իր արձակած վճիռը։

Կան ուրիշ զանազան տարօրինակ ձևեր՝ որոնց մասին աւելորդ է խօսիլ։

Ծ. Հ.